Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/37» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20.05.2019 թ.
ժ. 10:00

Մասնակցում են

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամուլյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ֆ. Կոստանդյան (ԲԱ), Մ. Սարգսյան (ԳԱ)
Տ. Պողոսյան (ԳԱ), Ա. Մխիթարյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

I. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին
(՝ Ն. Մամուլյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի «Գրիգորյան Շին» ՍՊԸ -ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառը եկամուտի հանրագումարը գումարային արտահայտությամբ բացակայում է, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

1.2 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ նիստը կասեցրեց և առաջարկեց «Գրիգորյան Շին» ՍՊԸ -ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.3 ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի՝ մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Ն. Մամուլյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել Մասնակցի կողմից անհամապատասխանության փաստաթղթերը ներկայացնելու կամ չներկայացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ն. Մամուլյան
Անդամներ՝		Ֆ. Կոստանդյան
		Մ. Սարգսյան
		Տ. Պողոսյան
		Ա. Մխիթարյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան